ՄԱԿ ՓԳՀ
ՄԱԿ-ի փախստականների գործակալություն

ՀԱՅԱՍՏԱՆ
ՍԱՏԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և առաջարկությունները Հայաստանի Հանրապետությունում ապաքաղաքացիության վերաբերյալ

Ներածություն

ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից օժտված է քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչելու և պաշտպանելու, ինչպես նաև ապաքաղաքացիությունը կանխելու և կրճատելու մանդատով: Այն իր մանդատն իրականացնում է համաշխարհային մակարդակում ապաքաղաքացիության խնդրի լուծման նպատակով կառավարությունների, ՄԱԿ-ի այլ գործակալությունների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու միջոցով: Այս տրամաբանությամբ է ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները Հայաստանի Հանրապետությունում ապաքաղաքացիության վերաբերյալ[1]: Այս փաստաթղթում ներկայացված առաջարկությունները հիմնված են Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ձեռնարկի և այդ հարցի վերաբերյալ հեղինակավոր ուղղորդման վրա[2]:

---

[1] ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի բանաձև A/RES/50/152, 9 փետրվարի 1996թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unhcr.org/refworld/docid/3b00f31d24.html; վերահաստատված է հաջորդող բանաձևերում, այդ թվում՝ 2007 թվականի հունվարի 25-ի A/RES/61/137 բանաձև, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unhcr.org/refworld/docid/ 45fa902d2.html, 2008 թվականի հունվարի 24-ի A/RES/62/124 բանաձև, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unhcr.org/refworld/docid/47b2fa642.html, և 2009 թվականի հունվարի 27-ի A/RES/63/148 բանաձև, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unhcr.org/ refworld/docid/4989619e2.html; ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Եզրակացություն ապաքաղաքացիության ճանաչման, կանխման և կրճատման և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության մասին, 6 հոկտեմբերի 2006թ., Թիվ 106 (LVII) - 2006, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/453497302.html:

[2] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Ձեռնարկ քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության մասին, 30 հունիսի 2014թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/53b676aa4.html; ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Ուղեցույց ապաքաղաքացիության մասին թիվ 4. Ապահովել յուրաքանչյուր երեխայի՝ քաղաքացիություն ստանալու իրավունքը Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թվականի կոնվենցիայի 1-4-րդ հոդվածների միջոցով, 21 դեկտեմբերի 2012թ., HCR/GS/12/04, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/50d460c72.html; ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Ուղեցույց ապաքաղաքացիության մասին թիվ 5. Քաղաքացիության կորուստն ու քաղաքացիությունից զրկումը՝ ըստ Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թվականի կոնվենցիայի 5- 9-րդ հոդվածների, 2020թ. մայիս, HCR/GS/20/05, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/5ec5640c4.html; ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Ուղղորդող փաստաթուղթ քաղաքացիություն չունեցող բնակչության գնահատման վերաբերյալ, 2011 թվականի մայիս, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/4f6887672.html:

Այս փաստաթուղթը պատրաստվել է Ապաքաղաքացիության վերացմանն ուղղված 2014-2024 թթ. համաշխարհային գործողությունների ծրագրի[3] և 2019 թվականի հոկտեմբերին ՄԱԿ ՓԳՀ-ի Գործադիր կոմիտեի 70-րդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած Ապաքաղաքացիության վերաբերյալ բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիայի[4] ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության տված խոստումների համաձայն Հայաստանում ապաքաղաքացիության խնդրի լուծման ուղղությամբ ՄԱԿ ՓԳՀ-ի և դրա գործընկերների սատարման աշխատանքները համակարգելու և հեշտացնելու նպատակով:

«Քաղաքացիություն չունեցող անձ» տերմինը սահմանվում է՝ ըստ Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիայի (1954 թվականի Կոնվենցիա) 1-ին հոդվածի 1-ին մասի. «*«քաղաքացիություն չունեցող անձ»* հասկացությունը նշանակում է անձ, որը չի համարվում քաղաքացի որևէ պետության կողմից՝ դրա օրենսդրության հիման վրա»[5]:

Քաղաքացիություն չունեցող անձանց թիվն ու ընդհանուր նկարագիրը

2011 թվականին անցկացված ազգաբնակչության վերջին մարդահամարի համաձայն՝ կար առանց քաղաքացիության 396 անձ, որոնցից 229-ը կանայք էին, 167-ը՝ տղամարդիկ[6]: Մարդահամարի զեկույցը պարունակում է չտեսակավորված տվյալներ ըստ տարիքային խմբերի (20-ից 70 տարեկան և բարձր), սակայն առկա չեն լրացուցիչ տեսակավորված տվյալներ այս անձանց գտնվելու վայրի, էթնիկ պատկանելության, լեզվի և (նախկին) մշտական բնակության երկրի վերաբերյալ:

Ըստ Հայաստանի Հանրապետության ոստիկանության (Ոստիկանություն)՝ անձանց թիվը, որոնք Հայաստանում գրանցված են որպես քաղաքացիություն չունեցող անձ, հաստատուն կերպով աճել է վերջին տարիներին. 2015 թվականին քաղաքացիություն

---

[3] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Ապաքաղաքացիության վերացմանն ուղղված համաշխարհային գործողությունների ծրագիր, 4 նոյեմբերի 2014թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/545b47d64.html:

[4] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիա ապաքաղաքացիության վերաբերյալ. Արդյունքներ և կարևոր հարցեր, 2020թ. մայիս, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/5ec3e91b4.html:

[5] ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա, 28 սեպտեմբերի 1954թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 360, էջ 117, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/3ae6b3840.html:

[6] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բնակչության մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցիչները), 2013թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.armstat.am/file/doc/99486303.pdf:

չունեցող անձանց թիվը եղել է 311, մինչդեռ 2019 թվականին՝ 961[7]: Նրանց մոտավորապես 80 տոկոսը Հայաստանի նախկին քաղաքացիներ են, որոնք հրաժարվել են իրենց հայաստանյան քաղաքացիությունից այլ երկրի քաղաքացիության համար դիմելուց առաջ կամ դիմելու ընթացքում: Այս իրավիճակը օրենսդրական բացի արդյունք է, որը ապաքաղաքացիության հնարավոր վտանգ է առաջացնում, եթե այլ քաղաքացիության հաջորդող ձեռքբերումը չի ստացվում:
Բացի այդ, կան 1315 փախստականներ Ադրբեջանից, որոնք միևնույն ժամանակ քաղաքացիություն չունեցող անձինք են 2020 թվականի հունվարի դրությամբ: Նրանք հարկադրաբար տեղահանվել են Ադրբեջանից 1988-1994թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով և չեն ստացել Ադրբեջանի քաղաքացիություն Խորհրդային Միության փլուզումից հետո:

Ապաքաղաքացիության լուծման ուղղությամբ արձանագրված առաջընթացը

Հայաստանը միացել է *1954 և 1961 թվականների Կոնվենցիաներին* 1994 թվականին: 2011 թվականին Ժնևում տեղի ունեցած Բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) պարտավորվեց վերանայել ազգային օրենսդրությունը, որպեսզի այն համապատասխանեցներ իր միջազգային պարտավորություններին: 2012 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ի հանձնարարությամբ իրականացվել է իրավական ուսումնասիրություն, որը առանձնացրել է Հայաստանում քաղաքացիության և ապաքաղաքացիության վերաբերյալ օրենսդրության մեջ և պրակտիկայում առկա հիմնական բացերն ու թերությունները[8]:
2015 թվականի մայիսին ՄԱԿ ՓԳՀ-ի տեխնիկական աջակցությամբ ընդունվել են փոփոխություններ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքում (Քաղաքացիության մասին օրենք)[9], որոնց նպատակն էր ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել 1961 թվականի Կոնվենցիային և քաղաքացիության ձեռքբերումն ու կորուստը կարգավորող համապատասխան իրավական նորմերին, մասնավորապես՝ ա) երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ծնված երեխաները, որոնք այլապես կլինեին

[7] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Համաշխարհային միտումներ. Հարկադիր տեղահանումը 2019 թվականին, էջ 72, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.unhcr.org/5ee200e37.pdf:

[8] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերը Հայաստանում, 2013 թ. մարտ, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/54817cb44.html:

[9] Հայաստան. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին 1995թ. օրենք [Հայաստան], 1995թ. նոյեմբեր, որը հասանելի է հետրյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/51b770884.html:

քաղաքացիություն չունեցող անձ (այդ թվում՝ այն երեխաները, որոնց ծնողների քաղաքացիությունը հայտնի չէ), ստանան Հայաստանի քաղաքացիություն, բ) ապահովել, որ ծնողների, խնամակալների կողմից քաղաքացիության կորստի կամ որդեգրման արդյունքում երեխաները հայաստանյան քաղաքացիությունը կորցնեն միայն այն դեպքում, երբ նրանք ունեն կամ ձեռք են բերում այլ քաղաքացիություն, գ) ապահովել, որ անձը կամավոր հրաժարվելու դեպքում քաղաքացիությունը կորցնի միայն այն դեպքում, երբ կա հավաստում այլ պետությունից այն մասին, որ խնդրո առարկա անձը դիմել է և իրավասու է ստանալու այդ երկրի քաղաքացիությունը[10], դ) ապահովել, որ այն անձինք, որոնց քաղաքացիությունը չեղարկվել է կամավոր հրաժարվելու արդյունքում, կարողանան ինքնաբերաբար վերականգնել քաղաքացիությունը իրենց դիմումի հիման վրա, ե) հնարավորություն նախատեսել օրենքով անաշխատունակ ճանաչված անձանց համար հպատակագրման դիմում ներկայացնել իրենց օրինական խնամակալի միջոցով, զ) նախատեսել փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հեշտացված հպատակագրում՝ հանելով երեք տարվա օրինական բնակության և հայոց լեզվի հմտությունների ցուցադրման պահանջները, և է) նախատեսել հինգ տարվա ժամկետային սահմանափակում, որից հետո անձը չի կարող զրկվել քաղաքացիությունից այն փաստի հիման վրա, որ քաղաքացիությունը ձեռք է բերվել կեղծ տվյալների/փաստաթղթերի հիման վրա։

Բացի այդ, 2017 թվականի դեկտեմբերի 6-ին խառը ամուսնությունների համատեքստում (մի ծնողը Հայաստանի քաղաքացի է, մյուս ծնողը՝ օտարերկրյա քաղաքացի) լրացուցիչ փոփոխություններ են ընդունվել Քաղաքացիության մասին օրենքում, որոնց նպատակն էր նախատեսել, որ միայն մեկ ծնողի համաձայնությունն է անհրաժեշտ, որպեսզի երեխան ստանա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե բնակվում է Հայաստանում։ Նախկինում երկու ծնողներն էլ պետք է իրենց համաձայնությունը տային, որպեսզի երեխան դառնար Հայաստանի քաղաքացի, ինչը գործնականում դժվարություններ էր առաջացնում և որոշ դեպքերում հակասում էր երեխայի լավագույն շահին։

2019 թվականի հոկտեմբերին Կառավարությունը կոնկրետ խոստումներ տվեց Ապաքաղաքացիության վերաբերյալ բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիայի ժամանակ, մասնավորապես՝ վերացնելու քաղաքացիության վերաբերյալ օրենսդրության մեջ գոյություն ունեցող բացերը, որոնք կարող են առաջացնել

[10] Չնայած ակնկալվում էր, որ այս օրենսդրական փոփոխությունը պետք է գործնականում ապահովեր կամավոր հրաժարումը 1961 թվականի Կոնվենցիայով սահմանված երաշխիքների համաձայն, պարզվեց, որ այն բավարար չէ այն դեպքերի լուծման համար, երբ այլ քաղաքացիություն չի շնորհվել (տես հրաժարման հարցի մասին ստորև)։

ապաքաղաքացիություն, ինչպես նաև ստեղծելու իրավական հիմքեր երկրում քաղաքացիություն չունեցող անձանց թվի կրճատման համար[11]:

Մնացած բացերն ու թերությունները ազգային օրենսդրության մեջ և պրակտիկայում

Կառավարության խոստումը վերահաստատում է ***ապաքաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրության պրակտիկայի*** վերանայման և դրանք 1954 և 1961 թվականների Կոնվենցիաներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: 2013 թվականին մշակվել է Ապաքաղաքացիության մասին օրենքի նախագիծ, սակայն 2016 թվականին Կառավարությունն այդ նախագիծը վերադարձրեց Ոստիկանությանը, որը ներկայումս պատասխանատու է ապաքաղաքացիության հետ կապված խնդիրների համար, և հանձնարարեց այն ընդգրկել Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին ընդհանուր օրենքում: Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին նոր օրենքի նախագիծ շրջանառության մեջ դրվեց 2017 թվականին, և մինչ օրս այդ նախագիծը դեռ սպասում է ընդունման:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է առաջնահերթություն տալ Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին օրենքի նախագծի ընդունմանը, որպեսզի այն համապատասխանեցվի 1954 թվականի Կոնվենցիային:

Ապաքաղաքացիության որոշման ընթացակարգը պատշաճ կարգով սահմանված և կանոնակարգված չէ ազգային օրենսդրությամբ և Ոստիկանության կողմից իրականացվում է միայն հատուկ և հրատապ դեպքերում, հիմնականում՝ երբ

[11] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիա ապաքաղաքացիության վերաբերյալ. Արդյունքներ և կարևոր հարցեր, 2020թ. մայիս, էջ 48, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/5ec3e91b4.html:

- - Մինչև 2020 թվականը անցկացնել համապարփակ ուսումնասիրություն քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին ոլորտում առկա բացերը բացահայտելու, խնդիրները քարտեզագրելու և ոլորտի հիմնական մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ առաջարկություններ անելու նպատակով:
- - Մինչև 2020 թվականը լրացուցիչ փոփոխություններ կատարել քաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրության դրույթներում, որոնք կարող են առաջացնել ապաքաղաքացիություն (այն է՝ հետամուտ լինել քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությանը, որի նպատակն է երաշխիքներ ներդնել հրաժարման գործընթացում):

- Մինչև 2024 թվականը վերանայել քաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրությունը քաղաքացիություն չունեցող անձանց թվի կրճատման օրենսդրական հիմքեր սահմանելու և նրանց իրավունքների իրականացումը երաշխավորող համապատասխան մեխանիզմներ ապահովելու նպատակով:

Հայաստանում ծնվում է երեխա, որը այլապես կլիներ քաղաքացիություն չունեցող անձ: Հստակ սահմանված ընթացակարգային չափորոշիչների և երաշխիքների[12] բացակայությունը կարող է առաջացնել թերություններ ապաքաղաքացիության որոշման ընթացակարգի իրականացման հարցում և կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ քաղաքացիություն չունեցող անձինք պարբերաբար և անհատապես չեն ճանաչվում, որոշումների կայացման գործընթացը արդար և արդյունավետ չէ, և իրավունքների ու ծառայությունների հասանելիությունն ու քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությունը երաշխավորված չեն: Հետևաբար այս մարդիկ շարունակում են մնալ իրավաբանորեն անտեսանելի, և նրանց շնորհված չեն այն իրավունքները, որոնք նրանք իրավասու են ունենալու:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է և պատրաստ է աջակցել Կառավարությանը ապաքաղաքացիության որոշման արդար և արդյունավետ ընթացակարգի ներդրման հարցում, որը համապատասխան կլինի միջազգային չափանիշներին և Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության վերաբերյալ ձեռնարկում ներկայացված հեղինակավոր ուղղորդմանը[13]:

Սահմանափակ տեղեկություններ են առկա Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց, ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող անձանց և չփաստաթղթավորված անձանց ***թվի, աշխարհագրական տեղակայման և նկարագրի*** մասին: 2011թ. բնակչության մարդահամարը լիարժեք կերպով չի ներառել ապաքաղաքացիության խնդիրները և չի տրամադրել համապարփակ տվյալներ չփաստաթղթավորված և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ: Արդյունքում այն լույս չի սփռել քաղաքացիություն չունեցող բնակչության թվի և նկարագրի, ինչպես նաև աշխարհագրական տեղակայման վրա: Ներկայումս ՄԱԿ ՓԳՀ-ն կապի մեջ է համապատասխան պետական գործակալությունների հետ (Վիճակագրական կոմիտե, Ոստիկանություն, Միգրացիոն ծառայություն և այլն), որպեսզի խթանի և սատարի առաջիկա մարդահամարի արդյունավետ կիրառումը և ապաքաղաքացիությանն առնչվող հարցերի ներառումը, որպեսզի հնարավոր լինի տվյալներ հավաքագրել ապաքաղաքացիության վերաբերյալ: Բացի այդ, հաշվառված քաղաքացիություն չունեցող անձանց մասին տեղեկատվությունը կանոնավոր

[12] Նույն տեղում 3:

[13] Նույն տեղում 3:

կերպով չի ստուգվել, և դրանից հնարավոր չէ ստանալ թարմ տվյալներ այս բնակչության վերաբերյալ: Այս բնակչության համապարփակ քարտեզագրման և գնահատման բացակայության պայմաններում սահմանափակ տեղեկատվություն է առկա խնդրի բնույթի և շրջանակի, ինչպես նաև ապաքաղաքացիության պատճառների մասին: Այս իմաստով անհրաժեշտ է մշակել քաղաքացիություն չունեցող բնակչության ճանաչման և/կամ ստուգման արդյունավետ մեխանիզմներ և ներդնել տեղեկատվության հավաքագրման, թարմացման և տրամադրման ավելի ֆորմալ և կանոնավոր մեթոդաբանություն:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է ուժեղացնել չփաստաթղթավորված, ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող և քաղաքացիություն չունեցող անձանց թվի, աշխարհագրական տեղակայման և նկարագրի վերաբերյալ կանոնավոր և չտեսակավորված տվյալների հավաքագրումը/ստուգումը, խթանել առաջիկա մարդահամարի ընթացքում քաղաքացիություն չունեցող բնակչության ներառումն ու լուսաբանումը և պատրաստ է աջակցել Կառավարությանը քաղաքացիություն չունեցող անձանց համապարփակ քարտեզագրման-գնահատման հարցում:

2019 թվականին Կառավարությունը շրջանառության մեջ է դրել Քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունների նախագիծը, որը լրացուցիչ ընթացակարգային երաշխիքներ է նախատեսում ***հայաստանյան քաղաքացիությունից հրաժարվելու*** դեպքում: ՄԱԿ ՓԳՀ-ն ակնկալում է, որ Ապաքաղաքացիության մասին թիվ 5 ուղեցույցում նշված՝ հրաժարման մասին չափորոշչի համաձայն՝ օրենքի նախագծի ընդունումից հետո քաղաքացիություն չունեցող անձ դառնալու վտանգը հայաստանյան քաղաքացիությունից հրաժարվելուց հետո այլ երկրի քաղաքացիություն չստանալու դեպքում կվերացվի հայաստանյան քաղաքացիության ավտոմատ վերականգնման միջոցով[14]:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է ընդունել Քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունները, որպեսզի արդյունավետ լուծում տրվի նախքան այլ քաղաքացիություն ստանալը հայաստանյան քաղաքացիությունից հրաժարվելու

[14] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), Ուղեցույց ապաքաղաքացիության մասին թիվ 5. Քաղաքացիության կորուստն ու քաղաքացիությունից զրկումը՝ ըստ Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թվականի կոնվենցիայի 5- 9-րդ հոդվածների, 2020թ. մայիս, HCR/GS/20/05, պարբ. 22, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/docid/5ec5640c4.html:

պատճառով ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող անձանց թվի աճին, և նախատեսվի հայաստանյան քաղաքացիության ավտոմատ վերականգնում այլ քաղաքացիություն չստանալու դեպքում:

Ադրբեջանից եկած փախստականները, որոնք քաղաքացիություն չունեցող անձինք են, կարողանում էին ստանալ հայաստանյան քաղաքացիություն Քաղաքացիություն մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ***պարզեցված ընթացակարգի*** միջոցով[15]: Ինչևէ, 2020 թվականի հունվարից ի վեր այդ հոդվածի կիրառության ժամկետը չի երկարաձգվել: Ուստի ներկայումս այս փախստականներն այլևս չեն կարողանում ստանալ հայաստանյան քաղաքացիություն պարզեցված ընթացակարգով: Բացի այդ, այս խմբի որոշ փախստականներ դեռևս չեն ցանկանում ստանալ հայաստանյան քաղաքացիություն՝ ելնելով անձնական նկատառումներից (օրինակ՝ զինվորական ծառայություն կամ փախստականի կարգավիճակի հետ կապված նպաստների կորուստ):

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Կառավարությանը երկարաձգել պարզեցված ընթացակարգը, մինչև նախկին ԽՍՀՄ քաղաքացիների փաստաթղթավորման հարցը հաջողությամբ կլուծվի, և ավելի հեշտացնել ընթացակարգը ոչ էթնիկ հայերի համար, որոնք ուժեղ կապեր ունեն Հայաստանում և բնակվում են դրա տարածքում Խորհրդային Միության փլուզումից ի վեր: Բացի այդ, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է վերլուծել Ադրբեջանից եկած փախստականների՝ հայաստանյան քաղաքացիություն չստանալու գոյություն ունեցող խոչընդոտները/պատճառները, ավելի հեշտացնել հպատակագրման ընթացակարգերը և սոցիալական պաշտպանության ծրագրերը հարմարեցնել հպատակագրման խոչընդոտները վերացնելուն:

Չնայած քաղաքացիություն չունեցող անձինք փաստաթղթավորված են ***Ոչ քաղաքացիության վկայականով***, այս փաստաթուղթը չի համապատասխանում միջազգային չափանիշներին (որևէ նշում չկա այն մասին, որ վկայականի սեփանակատերը քաղաքացիություն չունեցող անձ է 1954 թվականի Կոնվենցիայի իմաստով, պետական տուրքն ավելի բարձր է, քան ազգային անձնագրի դեպքում) և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) պահանջներին (կենսաչափական տվյալների բացակայություն): Կառավարությունը շարունակում է կրել քաղաքացիություն չունեցող անձանց միջազգային

[15] Նույն տեղում 10:

չափանիշներին համապատասխան փաստաթուղթ տրամադրելու պարտավորություն, սակայն իրականացման ուշացումը պայմանավորված է ընթացքի մեջ գտնվող օրենսդրական փոփոխություններով և տեխնիկական ու ֆինանսական դժվարություններով:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է և պատրաստ է աջակցել Կառավարությանը քաղաքացիություն չունեցող անձանց համար ԻԿԱՕ պահանջներին համապատասխան կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ներդրման հարցում:

Չփաստաթղթավորված և ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող անձանց ճանաչման հետ կապված մարտահրավերներ են հայտնաբերվել ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր «Առաքելություն Հայաստանի» կողմից իրականացված փոքրամասշտաբ ծրագրի միջոցով[16]: Հանրային իրազեկվածության պարբերական և արդյունավետ գործողությունների բացակայությունը խոչընդոտում է ապաքաղաքացիության ճանաչմանը, կանխմանը և կրճատմանը: Կարևոր է դիտարկել համապատասխան պետական գործակալությունների (ոստիկանություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, քկագ գրասենյակ) կողմից կանոնավոր հանրային քարոզարշավների իրականացման հնարավորությունը, որոնց կիզակետում պետք է լինի ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող բնակչության ճանաչումը, բնակչության պատեհաժամ փաստաթղթավորման կարևորությունը, քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց իրավունքների և ազատությունների մասին իրազեկվածության բարձրացումը և նրանց արդյունավետ փաստաթղթավորման և ինտեգրման խթանումը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է և պատրաստ է աջակցել Կառավարությանը հանրային իրազեկվածության պարբերական և արդյունավետ գործողությունների ներդրման հարցում, որոնք օգնում են չփաստաթղթավորված, ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող և քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացմանը, նպաստում են քաղաքացիություն չունեցող անձանց դրության ընբռնմանը, տեղեկացնում են քաղաքացիություն չունեցող անձանց իրենց իրավունքների և ազատությունների մասին և խթանում են նրանց փաստաթղթավորումն ու ինտեգրումը:

[16] Փոքրամասշտաբ ծրագիր, որն իրականացվել է Առաքելություն Հայաստանի՝ տեղական ՀԿ-ի կողմից 2018թ. նոյեմբերից 2019թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում և ֆինանսավորվել է ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից:

«Առաքելություն Հայաստանի» կողմից իրականացվող ծրագիրը բացահայտեց ***բնակչության գործուն և արդյունավետ փաստաթղթավորման*** հետ կապված բացերն ու թերությունները, ինչպես օրինակ՝ (i) չփաստաթղթավորված անձանց պարբերական նույնականացման, ուղղորդման և փաստաթղթավորման բացակայությունը, (ii) այս մարդկանց շրջանում փաստաթղթավորման կարևորության մասին իրազեկվածության/գիտակցման բացակայությունը, (iii) ոչ մատչելի պետական տուրքերը և/կամ այլ ֆինանսական սահմանափակումները, որոնք թույլ չեն տալիս անձանց ճամփորդել հեռավոր վայրերից շրջանային կենտրոններ/Երևան իրենց փաստաթղթավորման հետ կապված խնդիրները լուծելու համար, (iv) փաստաթղթավորման խնդիրների հարցով անվճար իրավաբանական օգնության և ներկայացուցչության բացակայությունը այն դեպքերում, երբ չփաստաթղթավորված անձինք ի վիճակի չեն վճարելու դրա համար (հատկապես՝ հեռավոր բնակավայրերի դեպքում) և (v) հատուկ կարիքներ (մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն) ունեցող անձանց համար պարզեցված ընթացակարգերի բացակայությունը, որոնք թույլ կտային առաջնահերթություն տալ փաստաթղթավորման հասանելիությունը և հեշտացնել այն նրանց համար: Չնայած կար հպատակագրման պարզեցված ընթացակարգ այն էթնիկ հայերի համար, որոնք նախկին ԽՍՀՄ քաղաքացիներ են (հասանելի չէ, տես վերևում՝ *պարզեցված ընթացակարգ*), այդ թվում՝ նրանց, ովքեր Ադրբեջանից են, ավելի բարդ և երկարատև ընթացակարգ է նախատեսված նրանց համար, ովքեր էթնիկ հայեր չեն:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Կառավարությանը բարեփոխել համապատասխան հաշվառման համակարգերը, որպեսզի քաղաքացիական գրանցման և փաստաթղթավորման բոլոր ընթացակարգերը, այդ թվում՝ ծննդի գրանցումը, համընդհանուր կերպով հասանելի դարձվեն բարդ ընթացակարգերը պարզեցնելու և արժեքի, ժամանակի, հեռավորության և բյուրոկրատական հարցերի հետ կապված խոչընդոտները վերացնելու միջոցով:

Առկա են նաև մարտահրավերներ՝ ***Հայաստանում ծնված երեխաների ծննդի գրանցման*** հետ կապված, հետևյալ դեպքերում. (i) տնային ծննդաբերություն և ծննդի գրանցման 6-ամսյա ժամկետի բացթողում (հիմնականում՝ փոքրամասնությունների դեպքում), (ii) երեխայի ծնունդը հավաստող բժշկական տեղեկանքի բացակայություն՝ պայմանավորված մոր կամ երկու ծնողների փաստաթղթերի բացակայությամբ կամ թերություններով, և (iii) հիվանդանոցից հեռանալը՝ առանց թույլտվության և ծննդի մասին բժշկական տեղեկանքի: Նման դեպքերը կարող են լուծում ստանալ միայն

երկարատև, ծախսատար և բարդ դատական վերանայման ընթացակարգի միջոցով, որի համար պահանջվում է իրավաբանական աջակցություն և ներկայացուցչություն։ ***Ուշ գրանցումը*** պահանջում է իրավաբանական և վարչական աջակցություն, որը խնդրո առարկա անձանց մեծ մասը չգիտի, թե որտեղից կարելի է ստանալ, և/կամ որի համար ի վիճակի չէ վճարելու, ինչի արդյունքում նրանք կարող են հայտնվել ապաքաղաքացիության վտանգի տակ։

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է և պատրաստ է աջակցել Կառավարությանը օրենսդրության և պրակտիկայի ամրապնդման հարցում յուրաքանչյուր երեխայի ծննդի համընդհանուր, անվճար և հապշտապ գրանցումը երաշխավորելու համար՝ անկախ ծնողների կարգավիճակից, փաստաթղթավորումից և այն հանգամանքից, թե արդյոք երեխան ծնվել է բժշկական հաստատությունում։ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է դիտարկել օրենսդրությունն ամրապնդելու հնարավորությունը ծննդի ուշ գրանցումը հեշտացնելու նպատակով, այդ թվում՝ անվճար իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն տրամադրելու միջոցով, եթե խնդրո առարկա անձինք վճարելու հնարավորություն չունեն։

Բացի այդ, ՄԱԿ ՓԳՀ-ն նաև աջակցում և սատարում է Հայաստանի անդամակցումը Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիային մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին հավատարմությունը ցույց տալու և քաղաքացիության բոլոր հայեցակերպերի նկատմամբ կիրառելի ավելի ուժեղ սկզբունքներ և կանոններ ներդնելու նպատակով, որոնք ներառում են բազմակի քաղաքացիության, զինվորական պարտականությունների և անդամ պետությունների միջև համագործակցությանն առնչվող հարցեր։

Եզրակացություն

Հայաստանում ապաքաղաքացիության խնդիրների շրջանակի, նկարագրի, պատճառների և մասշտաբների համառոտ վերլուծության հիման վրա ակնհայտ է, որ ապաքաղաքացիության խնդիրները իրենց բնույթով բարդ չեն։ Հաշվի առնելով, որ կա քաղաքական կամք, առաջնորդություն և Կառավարության կողմից հատկացվող ռեսուրսներ՝ հայտնաբերված բացերն ու թերությունները կարող են վերացվել համապատասխան օրենսդրության հետագա մշակման և ներդաշնակեցման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան դրա իրականացման ամրապնդման միջոցով։

Ապաքաղաքացիության վերացմանն ուղղված «#Ես պատկանում եմ» համաշխարհային քարոզարշավի շրջանակում և Կառավարության հանձնառությունների համաձայն՝ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը մշակել է 2020-2022 թթ. Ապաքաղաքացիության վերացման ռազմավարություն (Հավելված 1) և գործողությունների ծրագիր (Հավելված 2)։

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը պատրաստ է աջակցել Կառավարությանն իր ջանքերում, որոնց կիզակետում ապաքաղաքացիության կանխմանն ու կրճատմանը, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչմանն ու պաշտպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ ազգային օրենսդրության և պրակտիկայի բարելավումն է։

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան
20 օգոստոսի 2020թ.

Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչություն Հայաստանի Հանրապետությունում Ապաքաղաքացիության վերացման քարոզարշավ. Գործողությունների ծրագիր 2020-2022թթ.

Գործողություններ	Թիրախային խումբ	Ազդեցություն և կատարողական ցուցիչներ	Պատասխանատու բաժին	Ժամանակացույց	Պահանջվող բյուջե (ԱՄՆ դոլար)
2020թ.					
Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի (Խորհրդարան) հետ համագործակցությունն ու գործողությունները					
Ձևավորել աշխատանքային խումբ (ԱԽ) խորհրդարանում ձեռնարկի գործարկումն ապահովելու և երկու հանդիպում կազմակերպելու համար, որոնց նպատակն է օժանդակել Ձեռնարկին՝ ուշադրություն դարձնելով այն թեմաներին, որոնք կարևոր են Հայաստանի համար (այն է՝ հետևյալ ոլորտներում գրանցված հաջող պրակտիկայի հիման վրա՝ (i) սահմանել չփաստաթղթավորված և ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող անձանց ճանաչելու և նրանց հպատակագրումը հեշտացնելու ընթացակարգեր, (ii) այնպես անել, որ քաղաքացիությունից զրկվելու կամ քաղաքացիության կորստի արդյունքում անհատները չդառնան քաղաքացիություն չունեցող անձ)։	Խորհրդարանական աններ (ԽԱ-ներ), Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով	Բարձրացվում է ԽԱ-ների իրազեկվածությունը ապաքաղաքացիության հարցերի մասին, և օժանդակվում են համապատասխան օրենսդրական բարեփոխումները *Անցկացված հանդիպումների #-ը*	Պաշտպանության, արտաքին կապերի	2020թ. օգոստոս	Կիրառելի չէ[1]
Խորհրդարանի Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի հետ համագործակցությամբ կազմակերպել	Ոստիկանություն, ՄԾ, ԱԳՆ, ՄԻՊ գրասենյակ,	Ընդունվում է քաղաքացիություն չունեցող անձանց	Պաշտպանության	2020թ. հոկտեմբեր	300

[1] Որտեղ նշված է «Կիրառելի չէ», պահանջվում է միայն անձնակազմի ժամանակը։

կլոր սեղան Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին օրենքի վերաբերյալ՝ քննարկելու Օրենքը հաջողությամբ ընդունելուն օժանդակելու ճանապարհները	խորհրդարանական աններ	մասին ազգային օրենսդրությունը *Կլոր սեղանի մասնակիցների #-ը*			
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համագործակցությունն ու համատեղ սատարումը 2020թ. Ազգային մարդահամարի ուղղությամբ					
Ամրապնդել համագործակցությունն ու համատեղ աշխատանքը ՄԱԲՀ-ի հետ 2020 թվականի Ազգային մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքում կանոնավոր հաղորդակցության և համատեղ սատարման միջամտություններ կազմակերպելու միջոցով, որոնց նպատակն է ապահովել ապաքաղաքացիության բաղադրիչի դիտարկումը և ներառումը 2020 թվականի Ազգային մարդահամարում	ՀՀ վիճակագրական կոմիտե, Ոստիկանություն, ՄԾ, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար, ՄԱԲՀ	Բարելավվում է քաղաքացիություն չունեցող անձանց մասին տվյալների հավաքագրումը *Անցկացված քննարկումների #-ը*	Պաշտպանության	Մինչև 2020թ. ավարտ	Ենթակա է քննարկման ՄԱԲՀ-ի և Վիճակագրական կոմիտեի հետ
Առաքելություն Հայաստանի (ԱՀ) ծրագիրը ապաքաղաքացիության վտանգի տակ գտնվող անձանց նույնականացման հարցում աջակցության տրամադրման վերաբերյալ					
Աշտադիտարկել և աջակցություն ու ուղղորդում տրամադրել ԱՀ-ին ծրագրի հաջող իրականացման համար և մասնակցել ԱԽ-ի երկամսյա հանդիպումներին՝ ներկայացնելու ՄԱԿ ՓԳՀ փորձառությունը և մշակելու առաջարկություններ օրենսդրության և պրակտիկայի ամրապնդման համար	ԱՀ, Ոստիկանություն, քաղաքացիական հասարակություն, ՀՊԳ, ՄԻՊԳ, ԱՆ, ՄԾ, տեղական ինքնակառավարման մարմիններ	Հայտնաբերվում և վերացվում են ազգային օրենսդրության մեջ և պրակտիկայում առկա բացերը (այդ թվում՝ ծննդի գրանցման և փաստաթղթավորման հետ կապված)	Պաշտպանության, Ծրագրերի/նախագծերի վերահսկողության	Մինչև 2020թ. ավարտ	11 000

		Չփաստաթղթավորված և ապաքաղաքացիության վտանգի գտնվող անձանց #-ը, որոնք ճանաչվել և փաստաթղթավորվել են			
ԱՀ ծրագրի գնահատում Ծրագրի արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ կլոր սեղանի միջոցով և առաջարկություններ օրենսդրության մեջ և պրակտիկայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ	ԱՀ, Բաց հասարակության հիմնադրամներ, Ոստիկանություն, ՀՊԳ, ՄԻՊԳ, ԱՆ, տեղական մարմիններ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն և ՄԾ	Հայտնաբերվում և վերացվում են ազգային օրենսդրության մեջ և պրակտիկայում առկա բացերը, այդ թվում՝ ծննդի գրանցման և փաստաթղթավորման հետ կապված *Կլոր սեղանի մասնակիցների #-ը*	Պաշտպանության, արտաքին կապերի	2020թ. նոյեմբեր	1500
Պատրաստել Սատարման փաստաթուղթ ԱՀ Ծրագրի արդյունքների և եզրակացությունների հիման վրա և տարածել փաստաթուղթը համապատասխան գործընկերների և պաշտոնակիցների շրջանում	ԱՀ, Ոստիկանություն, ՄԻՊԳ, ՀՊԳ, ԱՆ, ՄԾ, տեղական մարմիններ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն և ՀԿ-ներ	Պատրաստվում և տարածվում է Սատարման փաստաթուղթը	Պաշտպանության, արտաքին կապերի	Մինչև 2020թ. ավարտ	Կիրառելի չէ

Փոխըմբռնման հուշագրի հիման վրա ՄԻՊԳ-ի հետ սահմանել ապաքաղաքացիությանն առնչվող տեղեկատվության կանոնավոր փոխանակում, որը կմեծացնի ՄԻՊԳ-ի ներգրավվածությունն ու դերը Հայաստանում ապաքաղաքացիության կանխման և կրճատման հարցում	ՄԻՊԳ, ԱՀ	Բարձրացվում է հանրության իրազեկվածությունը ապաքաղաքացիության հարցերի վերաբերյալ	Պաշտպանության	Մինչև 2020թ. ավարտ	Կիրառելի չէ
Խրախուսել և աջակցել ՄԻՊԳ-ին ապաքաղաքացիության հարցերի վերաբերյալ տարեկան զեկույցի պատրաստման հարցում	ՄԻՊԳ	Ապաքաղաքացիության հարցերն արտացոլվում են ՄԻՊԳ-ի տարեկան զեկույցում	Պաշտպանության	2020թ. սեպտեմբեր	Կիրառելի չէ
Կանոնավոր փոխգործակցություն հաստատել ԱԳՆ պատասխանատուի հետ ԱԳՆ-ի ներգրավվածությունը առաջիկա ԳործԿոմ-ի քննարկումներին ամրապնդելու նպատակով, որոնց ուշադրության կենտրոնում անցյալ տարի Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիայում հնչեցված հանձնառությունների համեմատությամբ գրանցված ձեռքբերումներն են	ԱԳՆ	Կառավարության կողմից առաջնահերթություն է տրվում ապաքաղաքացիության հարցերին	Պաշտպանության, Արտաքին կապերի	2020թ. օգոստոս	Կիրառելի չէ
Նպաստել Քաղաքացիության մասին օրենքում փոփոխությունների կատարմանը					
Նախապատրաստել և իրականացնել պաշտոնական հաղորդակցություն Քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունների սատարման առնչությամբ, որոնց նպատակն է կանխել նախքան այլ երկրի քաղաքացիություն ստանալը հայաստանյան քաղաքացիությունից	ԱՀ, Ոստիկանություն, ԱՆ, Խորհրդարան, ՄԻՊԳ	Ընդունվում են համապատասխան փոփոխություններ	Պաշտպանության	2020թ. հուլիս	Կիրառելի չէ

հրաժարվելու պատճառով առաջացող ապաքաղաքացիության վտանգը (ինչպես նաև հետևել հետագա ընթացքին ԱՀ-ի հետ համատեղ գրությունների և ԱԽ քննարկոկումների միջոցով)։					
Գալ համաձայնության և աջակցել Կառավարությանը քարտեզագրման ուսումնասիրության և քաղաքացիություն չունեցող բնակչության նկարագրի կազմմանն ուղղված հետազոտության հարցում					
Մշակել Հայեցակարգային ծանոթագրություն և Գործողությունների շրջանակ (ԳՇ) քաղաքացիություն չունեցող բնակչության քարտեզագրման և նկարագրային ուսումնասիրության համար, որի նպատակն է ստուգել տվյալները և ունենալ փաստերի վրա հիմնված գնահատում՝ քաղաքացիություն չունեցող անձանց հարմարեցված լուծումներ մշակելու համար (ժառանգաբար քաղաքացիություն չունեցող անձինք և քաղաքացիությունից հրաժարվածներ)	Ոստիկանություն, ԱԳՆ	Պատրաստվում է Հայեցակարգային ծանոթագրություն, և Գործողությունների շրջանակը համաձայնեցվում է համապատասխան մարմինների հետ	Պաշտպան ության	2020թ. հոկտեմբեր	Կիրառելի չէ
Կազմակերպել աշխատանքային մակարդակի մի շարք քննարկումներ համաձայնության մշակման նպատակով (ձևավորել ԱԽ, որը նաև համաձայնության կգա քարտեզագրման ճանապարհային քարտեզի շուրջ)	Ոստիկանություն	Բարձրացվում է համապատասխան անձնակազմի իրազեկվածությունը քարտեզագրման չափորոշիչների և լուծումներ գտնելու հարցում դրանց կարևորության մասին	Պաշտպան ության	2020թ. նոյեմբեր	Կիրառելի չէ
Հրատարակություններ և տեղեկատվական նյութեր					

«#Ես պատկանում եմ» քարոզարշավի վերաբերյալ նյութերի և ուղեցույցների թարգմանություն և հրատարակում՝ ի աջակցություն ՄԱԿ ՓԳՀ-ի և գործընկերների սատարման միջամտություններին	Ոստիկանություն, ՄԻՊԳ, ՀՊԳ, ԱՆ, Խորհրդարան, Լրատվամիջոցներ, ԱԳՆ, ՄԾ և ՀԿ-ներ	*Թարգմանված և հրատարակված փաստաթղթերի #-ը*	Պաշտպանության, Արտաքին կապերի	Մինչև 2020թ. ավարտ	2500
Հանրային տեղեկատվական նյութերի պատրաստում՝ ըստ «#Ես պատկանում եմ քարոզարշավի», մասնավորապես՝ 1. Մարդկանց հետաքրքրող մի շարք պատմություններ (տեքստեր, լուսանկարներ և տեսանյութեր) Հայաստանում քաղաքացիություն չունեցող/չփաստաթղթավորված անձանց մասին, 2. ՄԱԿ ՓԳՀ գլխավոր շտաբի և/կամ այլ երկրների գրասենյակների կողմից թողարկված տեսանյութերի/սոցիալական գովազդների համար հայերեն սուբտիտրերի մշակում, 3. Ֆոտոշարքերի օգտագործմամբ լուսանկարների ցուցահանդեսներ, 4. Պատի օրացույց՝ ֆոտոշարքերով, 5. Տեսողական պատկերներով պարագաներ (օրինակ՝ USB ֆլեշ կրիչներ, գրիչներ, թղթապանակներ, նոթատետրեր):	Լրատվամիջոցներ, քաղաքացիական հասարակություն, խորհրդարանական աններ, ՀԿ-ներ, Ոստիկանություն, ՄԾ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԲՀ	*Պատրաստված տեսողական պատկերներով պարագաների #-ը* *Պատրաստված/թարգմանված պատմությունների #-ը* Բարձրացվում է համապատասխան շահառուների իրազեկվածությունը «#Ես պատկանում եմ» քարոզարշավի մասին	Արտաքին կապերի	Մինչև 2020թ. ավարտ	6500

Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիա					
Նպաստել Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիային ուսումնասիրության վերջնականացման և տարածման միջոցով	ԱԳՆ, Ոստիկանություն, ԱՆ, ԵԽ, ՄԻՊԳ, խորհրդարանական աններ, համապատասխան ՀԿ-ներ	Ուսումնասիրությունը վերջնականացվում և տարածվում է	Պաշտպանության	2020թ. օգոստոս	Կիրառելի չէ
2021-2022թթ.					
Հետևել Կառավարության՝ ՕՎԻՐ-ը նոր Ներքին գործերի նախարարության կազմ հնարավոր տեղափոխման ծրագրի հետ կապված զարգացումներին և ներգրավվել համապատասխան մարմինների հետ քննարկումներում ապաքաղաքացիության ոլորտում համագործակցությունն ընդլայնելու նպատակով	Ոստիկանություն, ՄԾ, ԱՆ, Ոստիկանության ակադեմիա	Ստեղծվում է քաղաքացիություն չունեցող անձանց համար պատասխանատու նոր արդյունավետ կառույց	Պաշտպանության	Մինչև 2021 թվականի ավարտ	Ենթակա է քննարկման Ոստիկանության ակադեմիայի հետ
Մշտադիտարկել քաղաքացիություն չունեցող բնակչության քարտեզագրման և նկարագրային ուսումնասիրության վերաբերյալ Կառավարության հետ ձեռք բերված պայմանավորվածության իրականացումը, որի նպատակն է ստուգել տվյալները և ունենալ փաստերի վրա հիմնված գնահատում՝ քաղաքացիություն չունեցող անձանց հարմարեցված լուծումներ մշակելու համար (ժառանգաբար քաղաքացիություն չունեցող անձինք և քաղաքացիությունից հրաժարվածներ)	Ոստիկանություն, ԱԳՆ	Համապատասխան պայմանավորվածությունն է ձեռք բերվում և իրականացվում	Պաշտպանության	2021-2022թթ.	Ենթակա է քննարկման Ոստիկանության հետ

Աջակցել Կառավարությանը անձնակազմի կարողությունների հզորացման և Ապաքաղաքացիության որոշման ընթակարգի արդար, գործուն և արդյունավետ իրականացման, այդ թվում՝ տեղեկատվական թերթիկի մշակման հարցում, որում ԱՈԸ-ն բացատրվում է ապաքաղաքացիության կարգավիճակի համար դիմողներին	Ոստիկանություն	*ԱՈԸ վերաբերյալ վերապատրաստված անձնակազմի #-ը* Մշակվում է տեղեկատվական թերթիկ ԱՈԸ-ի վերաբերյալ	Պաշտպանության	2021-2022թթ.	Ենթակա է քննարկման Ոստիկանության հետ
Աջակցել Կառավարությանը չփաստաթղթավորված և քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչման ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման հարցում	Ոստիկանություն, Խորհրդարան, ԱՆ	Ընդունվում են համապատասխան ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր	Պաշտպանության	2021-2022թթ.	Կիրառելի չէ

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան
12 հունիսի 2020թ.